Երկրորդ ընթերցում

Լրամշակված Նախագիծ

Կ-629-04.07.2023-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՎ ԴՐԱՆՑ ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՏԱՎՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» 2010 թվականի ապրիլի 8-ի ՀՕ-42-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի վերնագրում «ցանկերը» բառից հետո լրացնել «և մասնագիտական փորձաքննության անցկացումը» բառերը:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է սահմանել զգայուն ապրանքների ցանկեր, որոնցում ներառված ապրանքները վերափոխման արդյունքում կարող են հանդիսանալ սույն օրենքի իմաստով հսկվող ապրանքներ:»:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասում «Համապատասխանության գնահատման մասին» բառերը փոխարինել «Հավատարմագրման մասին» բառերով:

Հոդված 4. Օրենքի 6-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների մասնագիտական փորձաքննության անցկացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

Հոդված 5. Եզրափակիչ մաս և անցումային դրույթ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող երեսուներորդ օրը:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենդրական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում:

~~Առաջին~~ Երկրորդ ընթերցում

Կ-629-04.07.2023-ՏՀ-011/1

Լրամշակված Նախագիծ

#

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՎ ԴՐԱՆՑ ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՏԱՎՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ 2010 թվականի ապրիլի 8-ի ՀՕ-42-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի վերնագրում «ցանկերը» բառից հետո լրացնել «և մասնագիտական փորձաքննության անցկացումը» բառերը:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է սահմանել զգայուն ապրանքների ցանկեր, որոնցում ներառված ապրանքները վերափոխման արդյունքում կարող են հանդիսանալ սույն օրենքի իմաստով հսկվող ապրանքներ:»:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասում «Համապատասխանության գնահատման մասին» բառերը փոխարինել «Հավատարմագրման մասին» բառերով:

Հոդված 4. Օրենքի 6-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների մասնագիտական փորձաքննության անցկացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

Հոդված 5. Եզրափակիչ մաս և անցումային դրույթ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող երեսուներորդ օրը:~~, բացառությամբ սույն օրենքի 4-րդ հոդվածի:~~

2~~. Սույն օրենքի 4-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասից բխող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու օրը, սակայն ոչ ուշ, քան սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից երեք ամիս հետո:~~ 2. Սույն օրենքից բխող ենթաօրենդրական ակտ~~ը~~ն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամ~~ա~~սյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՎ ԴՐԱՆՑ ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՏԱՎՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-629-04.07.2023-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագիր և 1-ին հոդված	Առաջարկում ենք նախագծի վերնագրում և 1-ին հոդվածում «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաեւ երկակի նշանակության տեղեկատվության եւ մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) լրիվ անվանման հիշատակման մեջ նշված «Հայաստանի Հանրապետության»	Ընդունվել է:	Ընդունվել է: -

			բառերը հանել՝ պահպանելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, այն է՝ «3. Օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը եւ «օրենք» բառը»:		
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում նախատեսված Օրենքի 6-րդ հոդվածի վերնագրում ««և փորձաքննության անցկացումը»» բառերը փոխարինել ««և մասնագիտական փորձաքննության անցկացումը»» բառերով, քանի որ Նախագծի 4-րդ հոդվածով Կառավարությանը լիազորվում է սահմանել հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների **մասնագիտական** փորձաքննության անցկացման կարգը:	Ընդունվել է	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 5-րդ հոդված	Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է՝ «Սույն օրենքի 4-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասից բխող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ուժի մեջ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			մտնելու օրը, սակայն ոչ ուշ քան սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից երեք ամիս հետո»: Հարկ է նկատել, որ Նախագծի 4-րդ հոդվածով Օրենքի 6-րդ հոդվածում լրացվող նոր 3-րդ մասը նախատեսում է ենթաօրենսդրական ակտի ընդունում, առանց որի Օրենքի 6-րդ հոդվածում լրացվող նոր 3-րդ մասը չի կարող կատարվել, հետեւաբար անհրաժեշտ է Նախագծի անցումային դրույթներում հստակ նշել ենթաօրենսդրական ակտերի ընդունման ժամկետը: Բացի այդ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը, տվյալ պարագայում Նախագծի 4-րդ հոդվածով Օրենքի 6-րդ հոդվածում լրացվող նոր 3-րդ մասով սահմանված ենթաօրենսդրական ակտը կարող է ընդունվել նաեւ այն օրենսդրական ակտի հիման վրա, որն ընդունվել, սակայն դեռեւս ուժի մեջ չի մտել, եթե օրենսդրական ակտով սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ. հետեւաբար առաջարկում ենք Նախագծի 5-րդ հոդվածում հստակ նշել Նախագծով		

			սահմանված ենթաօրենսդրական ակտերի ընդունման ժամկետը՝ առանց նախատեսելու Նախագծի 4-րդ հոդվածի ուժի մեջ մտնելու առավելագույն ժամկետը: Սույն առաջարկը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի եւ 5-րդ մասի պահանջներից: Ըստ այդմ առաջարկում ենք նախագծի 5-րդ հոդվածի՝ 1) 1-ին մասից հանել «, բացառությամբ սույն օրենքի 4-րդ հոդվածի» բառերը, 2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «2. Սույն օրենքից բխող ենթաօրենդրական ակտը ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում:»		